

ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՎԼ. Ա. ԿՈՒՐՈՅԵԴՈՎԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ, ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի և անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ Ձեր կյանքում նշանակալից իրադարձության՝ Ձեր ծննդյան 70-ամյակի և կառավարական բարձր պարգևի՝ «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով պարգևատրվելու առթիվ:

Այդ պատվին Դուք արժանացել եք Ձեր կատարած հայրենասիրական մեծ գործերի և ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդմանը բերած Ձեր նպաստի համար: Մենք բարձր ենք գնահատում Ձեր այդ շնորհակալ աշխատանքը, որին Դուք նվիրել եք բազում տարիներ՝ ձեռք բերելով մեծ հեղինակություն և վայելելով աշխարհի առաջադեմ հասարակության հարգանքը:

Ցանկանում եմ Ձեզ նորանոր հաջողություններ այդ պատվաբեր գործում: Քաջառողջություն Ձեզ և սրտագին շնորհավորանքներ:

ՎԼԱԴԻՄԻՐ ԱԼԵՔՍԵԵՎԻՉ ԿՈՒՐՈՅԵԴՈՎ

ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ (1978 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1)